Անձանց ազատ տեղաշարժ

Ներածություն

Անձանց ազատ տեղաշարժի բնագավառում ՀՀ օրենսդրությունը չի համապատասխանում ԵՄ օրենսդրության պահանջներին:

Այս բնագավառում ԵՄ օրենսդրությունը սահմանում է որակավորումների ճանաչման ընդհանուր իրավական հիմքերը, ինչպես նաև առանձին մասնագիտությունների (դեղագործներ, անասնաբույժներ և այլն) հետ կապված որակավորումների ճանաչման առանձնահատկությունները: Այս գլխում կարգավորվում է նաև այլ երկրներում աշխատողների իրավական կարգավիճակը:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 1997 թվականի ապրիլի 11-ին Լիսաբոն քաղաքում ստորագրված «Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին» կոնվենցիան[1]: Այնուամենայնիվ, այս բնագավառի հիմնական նորմատիվ իրավական ակտերը հանդիսացող «Կրթության մասին»[2] և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին»[3] ՀՀ օրենքները չեն կարգավորում բարձրագույն կրթության, մասնագիտական կրթության և վերապատրաստման ճանաչման ընթացակարգերը: Այս բնագավառի իրավահարաբերությունների կարգավորման հետ առնչվող միակ օրենսդրական դրույթը «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածն է, որի համաձայն՝ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառի քաղաքականության սկզբունքների շարքում նախատեսվում է նաև եվրոպական և օտարերկրյա այլ պետություններում Հայաստանի Հանրապետության բարձրագույն և հետբուհական կրթության որակավորման աստիճանների համեմատման և դիպլոմների ճանաչման ապահովումը:

Հայաստանում չի նախատեսվում բժիշկների, դեղագործների, իրավաբանների, ճարտարապետների, անասնաբույժների ազատ տեղաշարժի, նրանց կողմից իրավաբանական անձ հիմնադրելու և ծառայություններ մատուցելու խնդիրների իրավական կարգավորումը:

Բացի այդ, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ նաև աշխատողների և նրանց ընտանիքների անդամների ազատ տեղաշարժի, աշխատելուց հետո երկրի տարածքում բնակվելու խնդիրների կարգավորումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է «Անձանց ազատ տեղաշարժի» գլուխը մինչև 2009 թվականը մասնակիորեն համապատասխանեցնել ԵՄ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

1994թ. դեկտեմբերի 6-ի թիվ 94/80 և 1993թ. դեկտեմբերի 6-ի թիվ 93/109 Խորհրդի դիրեկտիվների[4] համապատասխանեցման խնդիրը կդիտարկվի 2008 թվականից հետո:

Ծրագրի շրջանակներում համապատասխանեցման ենթակա չէ «Մասնագիտական վերապատրաստման որակավորումների համեմատելիության մասին» Խորհրդի 1985թ. հուլիսի 16-ի թիվ 85/368/EEC դիրեկտիվը, քանի որ այն կիրառելի չէ Հայաստանի Հանրապետության դեպքում:

2006 թվական

Օտարերկրյա աշխատողների ազատ տեղաշարժի հետ կապված հարցերը կանոնակարգելու նպատակով համապատասխանեցման կենթարկվեն Խորհրդի 1968թ. հոկտեմբերի 15-ի թիվ 1612/68 կանոնակարգը, Հանձնաժողովի 1970թ. հունիսի 29-ի թիվ 1251/70 կանոնակարգը, Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 2004թ. ապրիլի 29-ի թիվ 2004/38 դիրեկտիվը[5]:

Օտարերկրյա քաղաքացի համարվող աշխատողների իրավական կարգավիճակը, աշխատանքի ավարտից հետո երկրում մնալու իրենց և իրենց ընտանիքի անդամների իրավունքները կարգավորելու նպատակով կկատարվի «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի նախագծի

---

[1] ՀՀ ԱԺ որոշում, Ն-167-3, 14.12.2004թ.:
[2] ՀՕ-297, 14.04.1999թ.:
[3] ՀՕ-62, 14.12.2004թ.:
[4] 1994թ. դեկտեմբերի 6-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 94/80՝ «Իրենց քաղաքացիության պետություն չհանդիսացող անդամ պետությունում բնակվող՝ մունիցիպալ ընտրություններում Միության քաղաքացիների ընտրելու և ընտրվելու իրավունքի իրականացման համար մանրամասն կարգավորումներ սահմանելու մասին», 1993թ. դեկտեմբերի 6-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 93/109՝ «Իրենց քաղաքացիության պետություն չհանդիսացող անդամ պետությունում բնակվող՝ Եվրոպական խորհրդարանի ընտրություններում Միության քաղաքացիներ ընտրելու և ընտրվելու իրավունքի իրականացման համար մանրամասն կարգավորումներ սահմանելու մասին»:
[5] 1968թ. հոկտեմբերի 15-ի Խորհրդի կանոնակարգթիվ 1612/68՝ «Համայնքի տարածքում աշխատողների տեղաշարժի ազատության մասին», 1970թ. հունիսի 29-ի Հանձնաժողովի կանոնակարգ թիվ 1251/70՝ «Անդամ պետությունում աշխատելուց հետո այդ պետության տարածքում մնալու աշխատողների իրավունքի մասին», 2004թ. ապրիլի 29-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 2004/38՝ «Թիվ 1612/68 կանոնակարգը փոփոխելու, թիվ 64/221, 68/360, 72/194, 73/148, 75/34, 75/35, 90/364, 90/365 և 93/96 դիրեկտիվների ուժը կորցրած ճանաչելու, Միության քաղաքացիների և նրանց ընտանիքի անդամների՝ անդամ պետությունների տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակվելու իրավունքի մասին»:

լրամշակում և կմշակվի «ՀՀ տարածքում օտարերկրյա աշխատուժի ներգրավման և օգտագործման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

2007 թվական

Առանձնահատուկ մասնագիտություններով զբաղվող անձանց ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով ՀՀ օրենսդրությունը կհամապատասխանեցվի Խորհրդի 1986թ. դեկտեմբերի 18-ի թիվ 86/653 դիրեկտիվին[6]:

Առևտրային գործակալների գործունեության հատուկ իրավական կարգավորման նպատակով փոփոխություններ և լրացումներ կկատարվեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, ինչպես նաև կմշակվի «Ինքնազբաղ առևտրային գործակալների մասին» ՀՀ օրենքի նախագիծ:

Կրթության բնագավառում որակավորումների ճանաչման հուսալի համակարգ ներդնելու անհրաժեշտությունից ելնելով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կհամապատասխանեցվի Խորհրդի 1988թ. դեկտեմբերի 21-ի թիվ 89/48 դիրեկտիվին, Խորհրդի 1998թ. հունիսի 18-ի թիվ 92/51 դիրեկտիվին, Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1999թ. հունիսի 7-ի թիվ 1999/42 դիրեկտիվին, 1985թ. սեպտեմբերի 16-ի թիվ 85/432 Խորհրդի դիրեկտիվին, Խորհրդի 1985թ. սեպտեմբերի 16-ի թիվ 85/433 դիրեկտիվին և Խորհրդի 1993թ. ապրիլի 5-ի թիվ 93/16 դիրեկտիվին[7]:

Որակավորումների ճանաչման համակարգի ընդհանուր իրավական հիմքերը օրենսդրորեն սահմանելու համար փոփոխություններ և լրացումներ կկատարվեն «Կրթության մասին» և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում:

Հաշվի առնելով առանձին բնագավառների հատուկ կարգավորման նպատակահարմարությունը՝ կմշակվի «Դեղագործության ոլորտում որակավորումների ճանաչման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Վերը նշված պատճառաբանությամբ կմշակվի նաև «Առողջապահության ոլորտում որակավորումների ճանաչման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Աշխատողների գործուղման հետ կապված հարցերը կանոնակարգելու նպատակով համապատասխանեցման կենթարկավի Խորհրդի 1996թ. դեկտեմբերի 16-ի թիվ 96/71 դիրեկտիվը[8]: Այս բնագավառում կմշակվի «Աշխատողների գործուղման մասին» ՀՀ կառավարության որոշման անխագիծ:

2008 թվական

Առանձնահատուկ մասնագիտություններով զբաղվելու առումով անձանց ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը կհամապատասխանեցվի նաև, Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի 1998թ. փետրվարի 16-ի թիվ 98/5 դիրեկտիվին, Խորհրդի 1985թ. հունիսի 10-ի թիվ 85/384 դիրեկտիվին, ինչպես նաև Խորհրդի 1978թ. դեկտեմբերի 18-ի թիվ 78/1026 դիրեկտիվին[9]:

---

[6] 1986թ. դեկտեմբերի 18-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 86/653՝ «Ինքնազբաղ առևտրային գործակալների վերաբերյալ անդամ պետությունների օրենքների համակարգման մասին»:

[7] 1988թ. դեկտեմբերի 21-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 89/48՝ «Առնվազն երեք տարի տևողությամբ մասնագիտական կրթության կամ վերապատրաստման ավարտից հետո շնորհվող բարձրագույն կրթության դիպլոմների ճանաչման ընդհանուր համակարգի մասին», 1998թ. հունիսի 18-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 92/51՝ «Թիվ 89/48 դիրեկտիվի լրացման նպատակով մասնագիտական կրթության և վերապատրաստման ճանաչման երկրորդ ընդհանուր համակարգի մասին», 1999թ. հունիսի 7-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 1999/42՝ «Լիբերալիզացման և անցումային միջոցառումների մասին, ինչպես նաև որակավորումների ճանաչման ընդհանուր համակարգերը լրացնող դիրեկտիվներով նախատեսված մասնագիտական գործունեության հետ կապված որակավորումների ճանաչման մեխանիզմի հիմնադրման մասին», 1985թ. սեպտեմբերի 16-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 85/432՝ «Դեղագործության ոլորտում որոշակի գործունեության վերաբերյալ օրենքով, կանոնակարգով կամ վարչական ակտով սահմանված դրույթների համակարգման մասին», 1985թ. սեպտեմբերի 16-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 85/433՝ «Դեղագործության դիպլոմների, սերտիֆիկատների և պաշտոնական որակավորման այլ ապացույցների փոխադարձ ճանաչման, այդ թվում՝ դեղագործության բնագավառում որոշակի գործունեության հետ կապված հիմնադրման իրավունքի արդյունավետ իրականացմանը նպաստելու միջոցառումների մասին», 1993թ. ապրիլի 5-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 93/16՝ «Բժիշկների ազատ տեղաշարժին նպաստելու և բժիշկների դիպլոմների, վկայագրերի և ֆորմալ որակավորման այլ ապացույցների փոխադարձ ճանաչման մասին»:

[8] 1996թ. դեկտեմբերի 16-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 96/71՝ «Ծառայությունների մատուցման շրջանակներում աշխատողների գործուղման մասին»

[9] 1998թ. փետրվարի 16-ի Եվրոպական խորհրդարանի և Խորհրդի դիրեկտիվ թիվ 98/5՝ «Որակավորում ձեռք բերելու պետություն չհանդիսացող անդամ պետությունում իրավաբանի մասնագիտության մշտական հիմունքներով պրակտիկային նպաստելու մասին», 1978թ. դեկտեմբերի 18-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 78/1026՝ «Անասնաբուժության բնագավառում դիպլոմների, սերտիֆիկատների և պաշտոնական որակավորման այլ ապացույցների փոխադարձ ճանաչման, այդ թվում՝ հիմնադրման իրավունքի և ծառայություններ մատուցելու ազատության արդյունավետ իրականացմանը նպաստելու միջոցառումների մասին», 1985թ. հունիսի 10-ի Խորհրդի դիրեկտիվ թիվ 85/384՝ «Ճարտարապետության բնագավառում դիպլոմների, սերտիֆիկատների և պաշտոնական որակավորման այլ ապացույցների փոխադարձ ճանաչման, այդ թվում՝ հիմնադրման իրավունքի և ծառայություններ մատուցելու ազատության արդյունավետ իրականացմանը նպաստելու միջոցառումների մասին»:

Կմշակվի «Օտարերկրյա պետության որակավորում ստացած իրավաբանի մասնագիտական պրակտիկայի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ նշված իրավաբանների մասնագիտական աստիճանի, գրանցման և նրանց գործունեության իրավական կարգավորման նպատակով:

Այս ժամանակահատվածում որակավորումների ճանաչման կապակցությամբ առանձնահատուկ իրավական կարգավորման կենթարկվեն ճարտարապետության և անասնաբուժության բնագավառները: Այդ իսկ նպատակով կմշակվեն «Ճարտարապետների որակավորումների պաշտոնական ճանաչման մասին» և «Անասնաբուժության բնագավառում որակավորումների ճանաչման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծեր:

1.1.1 Օրենսդրական համապատասխանեցում

0	1	2	3	4	5	6
NN ը/կ	Միջոցառում	ԵՄ իրավական աղբյուր	Պատասխանատու մարմին	Ներկայացման ժամկետ	Անհրաժեշտ ռեսուրսներ (մարդ/օր)	Տեխնիկական աջակցություն
			2006			
1.	• "Օտարերկրացիների մասին" ՀՀ օրենքի նախագծի լրամշակում • "ՀՀ տարածքում օտարերկրյա աշխատուժի ներգրավման և օգտագործման մասին" ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1968թ. հոկտեմբերի 15-ի «Համայնքի տարածքում աշխատողների տեղաշարժի ազատության մասին» Խորհրդի թիվ 1612/68 կանոնակարգ 1970թ. հունիսի 29-ի «Անդամ պետությունում աշխատելուց հետո այդ պետության տարածքում մնալու աշխատողների իրավունքի մասին» Հանձնաժողովի թիվ 1251/70 կանոնակարգ 2004թ. ապրիլի 29-ի «Թիվ 1612/68 կանոնակարգը փոփոխելու, 64/221, 68/360, 72/194, 73/148, 75/34, 75/35, 90/364, 90/365 և 93/96 դիրեկտիվներն ուժը կորցրած ճանաչելու, Միության քաղաքացիների և նրանց ընտանիքի անդամների՝ անդամ պետությունների տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակվելու իրավունքի մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 2004/38	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	93	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		դիրեկտիվ				
ԸՆԴԱՄԵՆԸ					93	
2007						
2.	• «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1988թ. դեկտեմբերի 21-ի «Առնվազն երեք տարի տևողությամբ մասնագիտական կրթության կամ վերապատրաստման ավարտից հետո շնորհվող բարձրագույն կրթության դիպլոմների ճանաչման ընդհանուր համակարգի մասին» Խորհրդի թիվ 89/48 դիրեկտիվ 1998թ. հունիսի 18-ի «Թիվ 89/48/EEC դիրեկտիվի լրացման նպատակով մասնագիտական կրթության և վերապատրաստման ճանաչման երկրորդ ընդհանուր համակարգի մասին» Խորհրդի թիվ 92/51 դիրեկտիվ 1999թ. հունիսի 7-ի «Լիբերալիզացման և անցումային միջոցառումների մասին, ինչպես նաև որակավորումների ճանաչման ընդհանուր համակարգերը լրացնող դիրեկտիվներով նախատեսված մասնագիտական գործունեության հետ կապված որակավորումների	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	1-ին եռամսյակ	43	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն

		ճանաչման մեխանիզմի հիմնադրման մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 1999/42 դիրեկտիվ				
3.	«Աշխատողների գործուղման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1996թ. դեկտեմբրի 16-ի «Ծառայությունների մատուցման շրջանակներում աշխատողների գործուղման մասին» Եվրոպական պառլամենտի և խորհդրի թիվ 96/71 դիրեկտիվ	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	15	Նախնական փորձաքննություն
4.	«Առողջապահության ոլորտում որակավորումների ճանաչման մասին»ն ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1993թ. ապրիլի 5-ի «Բժիշկների ազատ տեղաշարժին նպաստելու և բժիշկների դիպլոմների, վկայագրերի և ֆորմալ որակավորման այլ ապացույցների փոխադարձ ճանաչման մասին» Խորհրդի թիվ 93/16 դիրեկտիվ:	ՀՀ կրթության և գիտության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարության մասնակցությամբ)	2-րդ եռամսյակ	48	Նախնական փորձաքննություն
5.	«Դեղագործության ոլորտում որակավորումների ճանաչման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1985թ. սեպտեմբերի 16-ի «Դեղագործության ոլորտում որոշակի գործունեության վերաբերյալ օրենքով, կանոնակարգով կամ վարչական ակտով սահմանված դրույթների կոորդինացման մասին» Խորհրդի թիվ 85/432 դիրեկտիվ 1985թ. սեպտեմբերի 16-ի «Դեղագործության դիպլոմների, սերտիֆիկատների և պաշտոնական որակավորման այլ ապացույցների փոխադարձ ճանաչման, այդ թվում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն (ՀՀ առողջապահության նախարարության մասնակցությամբ)	2-րդ եռամսյակ	28	Նախնական փորձաքննություն

		դեղագործության բնագավառում որոշակի գործունեության հետ կապված հիմնադրման իրավունքի արդյունավետ իրականացմանը նպաստելու միջոցառումների մասին» Խորհրդի թիվ 85/433 դիրեկտիվ				
6.	• «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում • «Ինքնազբաղ առևտրային գքործակալների մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում	1986թ. դեկտեմբերի 18-ի «Ինքնազբաղ առևտրային գործակալների վերաբերյալ անդամ-պետությունների օրենքների կոորդինացման մասին» Խորհրդի թիվ 86/653 դիրեկտիվ	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (ՀՀ արդարադատության նախարարության մասնակցությամբ)	4-րդ եռամսյակ	30	Խորհրդատվություն, նախնական փորձաքննություն
ԸՆԴԱՄԵՆԸ					**164**	
2008						
7.	«Ճարտարապետների որակավորումների ճանաչման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1985թ. հունիսի 10-ի «Ճարտարապետության բնագավառում դիպլոմների, սերտիֆիկատների և պաշտոնական որակավորման այլ ապացույցների փոխադարձ ճանաչման, այդ թվում հիմնադրման իրավունքի և ծառայություններ մատուցելու ազատության արդյունավետ իրականացմանը նպաստելու միջոցառումների մասին» Խորհրդի թիվ 85/384 դիրեկտիվ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն (ՀՀ քաղաքաշինության նախարարության մասնակցությամբ)	1-ին եռամսյակ	34	Խորհրդատվություն
8.	«Օտարերկրյա պետության որակավորում ստացած իրավաբանի մասնագիտական պրակտիկայի մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի	1998թ. փետրվարի 16-ի «Որակավորում ձեռք բերելու պետություն չհանդիսացող անդամ պետությունում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն (ՀՀ արդարադատության	1-ին եռամսյակ	19	Խորհրդատվություն

	մշակում	իրավաբանի մասնագիտության մշտական հիմունքներով պրակտիկային նաստելու մասին» Եվրոպական պառլամենտի և խորհրդի թիվ 98/5 դրեկտիվ	նախարարության մասնակցությամբ)			
9.	«Անասնաբուժության բնագավառում որակավորումների ճանաչման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում	1978թ. դեկտեմբերի 18-ի «Անասնաբուժության բնագավառում դիպլոմների, սերտիֆիկատների և պաշտոնական որակավորման այլ ապացույցների փոխադարձ ճանաչման, այդ թվում հիմնադրման իրավունքի և ծառայություններ մատուցելու ազատության արդյունավետ իրականացմանը նպաստելու միջոցառումների մասին» Խորհրդի թիվ 78/1026 դիրեկտիվ	ՀՀ կրթության և գիտության նախարարություն (ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասնակցությամբ)	2-րդ եռամյակ	26	Խորհրդատվություն
ԸՆԴԱՄԵՆԸ					79	
ԸՆԴԱՄԵՆԸ					336	

1.1.2 Ինստիտուցիոնալ կարողություններ

0	1	2	3	4
NN p/կ	Հաստատություն	Վերակազմակերպում	Վերապատրաստման կարիքներ	Տեխնիկական աջակցության կարիքներ
1.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	-	Որակավորումների փոխադարձ ճանաչման և անձանց տեղաշարժի վերաբերյալ դասընթաց (5 օր / 2007թ.)	Խորհրդատվություն
2.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	-	Աշխատողների ազատ տեղաշարժի վերաբերյալ դասընթաց (5 օր/2008թ.)	Խորհրդատվություն